ՄՈՍԿՎԱՅԻ Մ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (X-XII դասարան)

ՀԱՐԳԵԼԻ՛ ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է *3* մասից*:*

I* մասը գնահատվում է *10* միավոր, ընդգրկված է *5* հարց, յուրաքանչյուրը գնահատվում է *2* միավոր*:

II* մասը գնահատվում է *30* միավոր*:* Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել *15* առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է *2* միավոր*:

III* մասում առաջարկվում է փոխակերպել տրված նախադասությունները և կազմել գծապատկեր*:* Առաջադրանքը գնահատվում է *10* միավոր. յուրաքանչյուր առաջադրանքը գնահատվում է *2* միավոր*:* Փոխակերպումներում թույլ տրված ուղղագրական կամ կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է *0.1* միավոր, գծապատկերը կազմելիս նախադասությունը չհամարակալելու համար՝ *0.5* միավոր*:

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների*:*

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *120* րոպե*:*

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.

Ա__բյուր, ուր__աթ, __ոիորդ, աղ__իկ, որ__ի, կառ__, հարա__, ընդ__անուր, ամենա__ոկար, բար__ր:

ԱՌԱՋԱԴՐԱՆ 2. Վերականգնել տրված բառերի հնչյունափոխված արմատների անհնչյունափոխ տարբերակները.

Նրբերշիկ_____

Գնդակ_____

Համբուրել_____

Լճակ_____

Մթնել _____

Ջրատար_____

Գրասեղան_____

Հոգեկան_____

Փրփրադեզ_____

Սիրառատ_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.

Թև (թևի), հարավ (արևելք), փողոցից (փողոց), գեներալ (մայոր), եփել (թափել), ընդ (հատել), ի (նշան), կողք (կողքի), բարակ (մարակ), արագ (արագ).

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.

ԹԱՅԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, ԱԾՈՏ ԵՐՐՈՐԴ ՈՂՈՐՄԱԾ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ԱԾՈՏ ԵՐԿԱԹ, ՓՈՔՐ ՀԱՅՔ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Կետադրել.

Մեր ուղղաձիգ փողոցը Արևելքի այն ճանապարհի հատվածն էր որ ծայր առնելով հինավուրց Հռոմից հասնում էր Բյուզանդիայի վաղնջական ժամանակներում հիմնված հնօրյա մայրաքաղաք ապա օղակելով ողջ Փոքր Ասիան կտրում-անցնում է մեր տան

առջևով ձգվելով մինչև ՝աշխարհի ծայրը՛ Բաղդադ ինչ-որ հեքիաթային քաղաք լի հրաշքներով:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Հայոց հինավուրց սրբազնագույն գետը՝ Եփրատը կամ Արածանին, սկզբնավորվելով բարձրաբերձ Հայկական լեռնաշխարհի՝ երկինք հասնող կուսական բարձունքներից, սառցապատ կատարներից սրընթաց գահավիժում է, փոքր-ինչ հանդարտվում հարթավայրում և Պարսից ծոց չհասած՝ միավորվում Տիգրիսի հետ:

(2) Սնվելով Ծաղկանց հպարտ սարերի մաքուր աղբյուրներից՝ Արածանի-Եփրատը շառաչյունով թավալգլոր թռչկոտում է ժայռաբեկորների վրայով, մի վայրկյան անդորրանալով՝ շունչ առնում Մշո դաշտում, ապա հանկարծակի սեղմվում-խեղդվում Կնճան լեռների նեղ կիրճերում՝ մրրկաբաշ ալիքներով ծեծելով կանաչ ափերի ամայությունը:

(3) Ասում են՝ հեթանոս հայերի պաշտելի դիցուհին՝ Աստղիկը՝ սիրո աստվածուհին, լոգանք ընդունելու համար ընտրել է այդ վայրը:

(4) Դյութիչ դիցուհուն տեսնելու անհագ փափագը դեպի այս վայրերն էր ձգում հայ դյուցազուններին: **(5)** Հաղթահարելով դժվարին ճամփաներ՝ կտրիճները հավաքվում էին հանդիպակաց սարի՝ ժայռերով ծածկված այդ դարավանդի վրա, խարույկ վառում՝ կրակի լույսի տակ տեսնելու դիցուհուն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. *1*-ին նախադասությունից դուրս գրել *4* գոյական.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. *2*-րդ և *3*-րդ նախադասություններից դուրս գրել *4* անկախ դերբայ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. *2*-րդ նախադասությունից դուրս գրել սեռական հոլովով դրված *4* գոյական.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. *2*-րդ նախադասությունից դուրս գրել *4* ածական.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Որոշել ասում են **բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը.**

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. *3*-րդ նախադասությունից դուրս գրել *2* ստորոգյալ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. *5*-րդ նախադասությունից դուրս գրել ենթական և ստորոգյալը.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. *5*-րդ նախադասությունից դուրս գրել կապի *2* օրինակ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. *4*-րդ և *5*-րդ նախադասություններից դուրս գրել դերանվան *2* օրինակ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. *2*-րդ նախադասությունից դուրս գրել ձևի պարագայի *2* օրինակ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. *2*-րդ և *4*-րդ նախադասություններից ո՞րն է բարդ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. *3*-րդ և *4*-րդ նախադասություններից ո՞րն է պարզ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18. *3*-րդ նախադասությունից է դուրս գրել ուղիղ խնդրի *1* օրինակ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. *5*-րդ նախադասությունից դուրս գրել որոշչի *1* օրինակ.

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20. Նշել, թե ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա.

_____

ՄԱՍ III

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21. ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.5)* ԳԾԱՊԱՏԿԵՐԸ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.1* Բարդ նախադասությունը փոխակերպել պարզի.

ա) Երբ զինվորները հեռացան, բոլոր լաց եղան:

_____

_____

_____

բ) Նա շուտով հասավ միջնաբերդի հյուրատան այն հարկաբաժինը, որ հատկացված էր իրեն:

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.2* Պարզ նախադասությունը փոխակերպել բարդի*.*

ա) Երկար խորհելուց հետո Հայր Մարդպետը թիկնեց հանգստանալու:

բ) Քնած երեխան արթնացավ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.3* Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի*.*

ա) Հպարտ կեցվածք ընդունեց և ասաց.

- Ես էի այդ անպարտելի զորավարը:

բ) –Մի՞թե ես իրավունք ունեմ սիրելու,- շառագունելով պատասխանեց պատանին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.4* Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակիի*.*

ա) Հարևաններն ասացին Անդրեասին, որ ողբալով կորցրածը հետ չի բերի:

բ) Գրիգորը պատմեց, որ երբ ընկավ ծովը, հրեշը բռնեց իրեն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *21.5* Կազմել տրված նախադասության գծապատկերը *(համարակալել նախադասությունները).*

Մրրկահողմը խելագար մռնչում էր, գոռում-գոչյունով փոթորկվում՝ բարձրացնելով թանձր, ավազախառն փոշու՝ օդի մեջ երերացող սյուներ: